ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը հայտարարում է 2024-2025 ուսումնական տարվա նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելություն՝ հետևյալ մասնագիտություններով

Մասնագիտության դասիչ	**Մասնագիտություն**	**Տեղերի քանակը**
ԺԳ.00.02	«Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ)	1
Գ.00.09	«Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա»	1
ԺԹ.00.01 -	«Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն»	1
ԸՆԴԱՄԵՆԸ		3

Պահանջվող փաստաթղթերը՝

1) դիմում ՀՖԿՍՊԻ-ի ռեկտորի անունով,
2) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),
3) օտար լեզու առարկայի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ),
4) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում,
5) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի),
6) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությունները տեղի կունենան ՀՖԿՍՊԻ-ում՝ ըստ հետևյալ ժամանակացույցի.

Դասիչ, մասնագիտություն	**Քննության անցկացման օրը, ժամը**	**Անցկացման վայր**
ԺԹ.00.01 - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն»	Հունիսի 26-ին ժամը 13^{30}	լսարան 210
Գ.00.09 - «Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա»	Հուլիսի 1-ին ժամը 13^{30}	լսարան 210
ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ)	Հուլիսի 3-ին ժամը 13^{30}	լսարան 210

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. մայիսի 27-ից մինչև հունիսի 20-ը (ներառյալ) Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնում, հասցե՝ ք.Երևան, Ալեք Մանուկյան 11, հեռ.՝ (010) 55-33-10(1-64)